



ԿԻՉՈՐՈՒԹՅՈՒՆ

Քաղաքային «Կոմայրի» թերթի հավելված

1991 թ. հոկտեմբեր, № 49: Գինը՝ 50 կոպ.



Էլեկտրատեխնիկական գործարանը աղետից հետո:

Լուսանկար՝

Ա. ՄԱԿԱՐՑԱՆԻ



Ավիաժամայինները Հեղափոխության հրապարակում:

Լուսանկար՝

Հ. ՆՆՐԱՆՍՅԱՆԻ

ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀՆՈՒԱԳՐԵՐ

Ցնցված եմ բարեկամներիս
և որ դժբախտությունից: Իմ
տունը ձեր տունն է:

ԼԵՐՆԻԿ ԲՈՒՇԱԿՈՎ

•••

Այս ողբերգությունը գնա-
նառվում է իբրև խորհրդա-
նիշ ու ազդանշան մեկ այլ
չպատմության ավարտի՝ խա-
ղաղության հաստատման հա-
մար:

ԿԻՐԻՎ ՎՈՑՑԵՆ

•••

Մենք կարնկցում ենք: Գըլ-
խավորն այն է, որ դուք չը-
կորցնեք հույսը:

ԱՆԵՔԱՆԵՑ ՉԵՐՅՈՆՅԱՆԻ
ՄԵՐԳԵՑ ԳՐԵՑՈՒԹՅՈՒՆ

•••

Հրաշյա Հովհաննիսյանին.
Թանկագին եղբայր Հրաշ-
յա, եղբայր գրողներ, պատի-
սի չլաված սարսափի օրերին
չկան բառեր, որոնցով կարո-
ղանայի արտահայտել իմ ըն-
տանիքի վիշտը: Հայ ժողո-
վրդին հասած դժբախտու-
թյունից ցնցված տառապում
ենք, ինչպես ամեն մի հայի
միտքը: Վրաստանը, ինչպես
միշտ, ձեզ հետ է: Ես պատ-
րաստ եմ օգնելու ամեն ին-
չով:

ԱՐՏԱՍՎԱՆԻ ՈՒ ՎՃՏԱՆԻ,
ՀԱՎԵՐԾ ԶԵՐ՝

ՋԱՆՍՈՒՎ ՉԱՐԿԱԲԱՆԻ

•••

Թանկագին ընկերներ, ամ-
բողջ վրաց ժողովրդի հետ
միասին «Ծխակարի» ամսա-
գրի խմբագրության աշխա-
տակիցները խորապես վշտա-
ցած են եղբայրական Հայաս-
տանին հասած ծանր աղետի
կապակցությամբ, որը մարդ-
կային բազմաթիվ զոհեր է
խել: Արտահայտելով մեր կա-
րնկցանքի ու սատար լինելու
զգացմունքները հայտնում
ենք, որ մեր ամազգի տա-
սերկուներորդ համարի հեղի-
նակային ամբողջ հոնորարը
փոխանցվել է հայ ժողովրդի
օգնության ֆոնդին:

Պատասխանատու քար-
տուղար՝

ԱՎԹԱՆԻՎ ԶԻՆԻՎԻԾՎԻԼԻ

ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՒՄ Է ԿԱՑԱՐԱՆԸ

Երկրաշարժի աճախոր հարվածից բաժին է հասել նաև երկաթուղային կայարանին: Այստեղ 6 օր արգելվում էր մարդկանց մուտքը և ուղևորների կամար «պալատարան» էր ծառայում անձի- շապեն կատամատուցող: Բայց ահա, արդեն երեք օր է, ինչ այստեղ են կենդանի մնալիս և վրաց շինարարները: Մեկ օրում կայարանից դուրս բերվեց մեծ քանակությամբ շինարարական աղբ, որը հակապակաս բյուր կազմեց: Մինչև ուշ գիշեր այստեղ էլեկտրազո- դողները ամրացվում, ուժեղացնում էին կրող հենասյուները, շար- ռուբ միջնապատեր, ձեփագործները վերականգնում փլված մասերը:

Այստեղ օրինիրուն աշխատում են տարբեր մասնագիտության 70 շինարարներ, որոնց գլխավորում են Անդրերկրաբանական քաղաքա- ցիական շինությունների ծառայության պետ Ալբերտ Տապիան և Խարկովի հարավային երկարություն շինությունի ղեկավար Ալեք- սանդր Կոռիլով: Վրաց և ուկրաինացի վերականգնողները, կառու- ցողները խոստացել են երկաթուղային կայարանի տպասարանի դռները բացել մինչև դեկտեմբերի 30-ը: Այնուհետև նրանք կձեռ- նարկեն տպասարանի օժանդակ հարմարությունների վերականգ- ցումը:

Իսկ մինչ այդ կայարանը գործում է մեծ ծանրաբեռնվածությամբ: Կիրովականից ուղևորվում են ոչ միայն առողջարաններ և պան- սիոնատներ մեկնող կանանցով ու երեխաներով՝ իր գնացքակազ- մերը, այլև գրաֆիկի փոքր ինչ խախտումներով շարժվում են դեպի Մոսկվա, Թբիլիսի գնացող գնացքները: Ն. ԿՈՍՏԱՆՅԱՆ



ԹԱՌԱՄԵՑԻՆ ԵՄԱԳԻԿՆԵՐԻ ՆՄԱՆ

ՀԱՍՄԻԿ և ՎԱՐԳՈՒՇԻ ՀԱԿՈՒՑԱՆՆԵՐԸ (ծնված 1975 և 1978 թ.թ.) սովորում էին № 10 դպրոցի 7-րդ և 5-րդ դասարաններում:

Երկու ընկերներն էլ այդ օրը ուշացան առաջին դասից: Հասնելը չէր ուզում այդ օրը դասի գնալ, իսկ Վարդուհին համառորեն պնդեց. «Ստուգողական ունենք, ես առկայման պիտի գնամ, հետո էլ ընկեր ԹՈՐՈՍԱՆՆԵՐՆԵՐԸ ասել է, որ այսօր շատ կարևոր բան պիտի պատմի»: Եվ հայրը՝ Ալ- բերտը երկու ընկերներին տաքսի ավտոմեքենայով հասցրեց դպրոց: Իսկ մորը՝ Թամարային տեսած երազը հանգիստ չէր տալիս: «Երբայց տեսա ձեռքիս մատանոտ վրա երեք բարեք կային, երկուսը խամրած էին, մեկը՝ փայլուն: Նայեցի մա- տանուս ու գարնացա, թե ոնց եմ մատանին ասել ու չեմ տեսել բարեքի խամրածությունը...»:

Վարդուհին սովորում էր գերազանց գնահատականներով, Հասնիկը՝ հարվածային, երկուսն էլ հաճախում էին երա- ժըշտական դպրոց: Հասնիկը սովորում էր դաշնամուրի, Վարդուհին՝ ջութակի դասներում:

... Սիրելի վաղամեռիկ ծաղիկներ, ձեր մայրիկի մա- գեթին (40 տարեկան հասակում) հավերժ սպիտակ ձյունն է իջել, ու ձեր կարուն է մորմոքում վշտի արցունքներով:

ԼՈՒԻՉԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ՄԱՐԱՏ ՌԱՆԻԿԻ ԳԱՌՈՒ ՅԱՆԸ չափից ավելի լուրջ և զարգացած երեխա էր, տար բերվում էր իր շատ հասա- կակիցներից կարդացածու- թյամբ: Խորանում էր տեխնի- կական հարցերի մեջ, քան- դում ու հավաքում էր սար- քեր: Տարված էր նաև երգ ու երաժշտությանը:

Մտվել է 1977 թվականին: Սովորում էր № 16 դպրոցի 5-րդ «Գ» դասարանում: Մի քանի ամիս անց նա ար- ժուշտական դպրոցի 3-րդ դա- ասարանում, կարևորեցի մասնա գիտությանը:

Երբ Գարոյանները տուն առացան երկ/գծի ավանում, ծնողները Մարատին տեղա- փոխեցին № 27 դպրոց, բայց միայն մի շաբաթ կարողա- ցավ հաճախել: Հին դպրոցը ձգտում-կանչում էր և քաղցր հուշեր էին կապված նրա հետ: Մարատը զոհվեց իր սի- րած № 16 դպրոցում: մուկե- րած տարեքի հետևանքով:

Ընդամենը 19 զարուս տե- սով ԿԱՐԻՆԸ ՍԱՇԻԿԻ ՄԸ- ԿՐՏՏՅԱՆԸ, Ավարտեց № 36 դպրոցը, առաջին փորձը կատարեց մանկավարժա- կան ինստիտուտ ընդունվե- լու: Զհաջողվեց: Սակայն ըը- հուսահատվեց, աշխատանքի անցավ կոչիկի ֆարքիկա- յում, միաժամանակ հասա- ռորեն պարապում էր...

... Գեկտեմբերի 6-ի երե- կոյան տրամադրությունը խիստ ընկած էր, — պատմում է մայրը: Գնում է մորա- բրոջ տուն և մորաբրոջ՝ Մա- րուսայի և աղջկա՝ Հասնի- կի հետ զրուցելու ասում է. «Կտեսնե՞ր, ես կմեռնեմ» ու հոնգուր-հոնգուր լաց է լի- նում: Նրան հանգստացնում են, թե կյանքդ առջևում է, թող մեծերը աղպես մտա- ծեն:

Եվ ինչ... հաջորդ օրը կո- շիկի ֆարքիկայի ծածկասա- կերը ճգմեցին զեռատի աղ- ջրկա երազները...

ԱՆՈՒՇԻԿ ԶՈՒՆԻԿԻ ՍԱՆՎԱՅԱՆ

Մտվել է 1969 թվականին, զոհվեց՝ 18 տարին շրոտ- րած: Սովորել է № 23 դրպ- րոցում, լավ աշակերտ էր: Ավարտելուց հետո ընդուն- վեց Նալբանդյանի անվան սանկալարծական ինստի- տուտի անգլո-ռուսական ֆա- կուլտետը: Երրորդ կուրսում էր... Դպրոցի հետ մեկտեղ ավարտել էր նաև Կոմիտաս- սի անվան երաժշտական դպրոցի դաշնամուրային բաժինը: Երգն ու երաժշտու- թյունը մշտապես ուղեկցում էին Անուշիկին:

Աղետի ժամանակ նա ինչ տխուրտի մուտքի մոտ էր: Հարվածը նրան ըզել էր ներս ու աղպես էլ մնացել էր, մահը վրա է հասել միանգամից: Մինչդեռ ծը- նողները երկուսն էլ բժիշկ՝ Զոնիկ և Զուլիկ Սահակյան- ները, օգնում էին փրկված- ներին՝ լիմանալով իրենց աղջնակի զոհվելու մասին:

Այս սեռայն ու ժպտերես աղջիկը ծնվեց զարանային արևոտ մի օր՝ 1977 թ. մար- տի 18-ին: ԳեկՈՐԳՅԱՆՆԵՐԻ ընտանիքի առաջին ծաղի- կըն էր, որի ծնունդը զարնա նարույր երգեր բերեց նը- բանց (Նոյեմին ու Սամվե- լին): «Գրակ» աղջիկ դար- ձավ ՀԱՍՄԻԿԸ, սովորեց № 10 դպրոցում՝ գերազանց գնահատականներով:

Հասնիկ, երազների աղ- ջիկ, շատ էիր ուզում իրա- վարան դառնալ: «Ցանկա- կում եմ իրավարան դառ- նալ, որ արդար գատ անեմ, որպեսզի սումգայիկներ ալլես շիրկեմ»:

Բայց... կատարվեց մորը գիշերային երազը. «Մի կին եկավ, մտավ մեր տուն ու տանս ընտիր վարագույրը քաշեց, պատահանից պոկեց ու տարավ»...

... Ավաղ, մանուկ օրերը մորմոքող հուշեր դարձան, նկարդ՝ շրջանակվեց ծնող- ներից համար:

ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԷ՝ ԹԱՄԱՐԱՆ

ԱՐՄԵՆ ԳՈՐԿՆԻ ՀԱՌՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մտվել է 1979 թ. ապրիլի 7-ին, կենդանական քաղա- րում: Ընդամենը ինը գա- րունք տեսած ԱՐՄԵՆԻՍ ա- նունն էլ զրվեց երկրաշար- ժի զոհերի կողքին: Տղաս շատ աշխույժ էր, ժիր: Մի- ծաղն անպակաս էր նրա զենքից:

Երկրաշարժից մի շաբաթ առաջ հիվանդ էր, դպրոց չէր գնում: Աղետից առաջ նորից դասի գնաց և այդ ե- րեք օրն էլ անսովոր բան էր կատարվում երեխային հետո Առավոտները անից դուրս գալիս ձեռքով համբույր էր ուղարկում ինձ, ասելով՝ մա՛, ցր: Սիրտս վատ բան էր գուշակում և նեղվեցի... Արմենին գտանք երկու ա- միս հետո, անհայտ զոհ- վածների գերեզմանից:



ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԸ Ք Ո Ւ Յ Ր Ո Ւ Ե Ղ Բ Ա Յ Ր

Իմ լուսչ ու հրաշագեղ բայիկներս, որ- քան դասն ճակատագիր բաժին ընկավ ձեզ...

ԺՈՐԱ ԷԴՎԱՐԴԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծըն- վել էր 1977 թ., կենդանակում: Սովորում էր № 9 դպրոցում: Սիրում էր սպորտը, ուսման առաջավոր էր: Ժողովա փլատակ- ների տակից հուսադրում էր մեզ ու ըն- կերոջ մայրիկին: Նա գաղտնի հայտնեց մեզ, որ ընկերը չկա և գարնան էր, որ լաց էի լինում: Բայիկս, մտածում էի,

ընկերոջը մոր մասին, իսկ ինչո՞ւ չը- լուծացիր ինձ, ես մեղք չե՛մ: Թվում է, թե հիմա քրոջը հետ ձեռք ձեռքի տված կը գաք ու տունս կլցվի ձեր ծափ ու ծիծա- րով: Ժողովիս հանեցիք ու բեռու թևերի վրա հավիտյան նա լոնց...

ՆԱՐԻՆԸ ԷԴՎԱՐԴԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ ծնվել էր 1978 թվականին: Երազում էր ուսուցչուհի դասույ: Օտտ էր կապված ինչ հետ: Հոգատար էր իմ նկատմամբ, կարծես նա նրա գավակը լինելու


Կարծես նախագում էր, որ պիտի բա ծավիլ ինձանից: Իմ նորաբողոք մանու- շակ, ծնվել է քույրդ, որին կոչել ենք քր անունով, բայց աչքիս առաջ միշտ դու ես՝ քո հուշիկ քայլերով, աննշմար, ինչպես լույսի շողը: Փարվում եմ, համբուրում և օ՛, ասոված, սթափվում եմ վայրկենա- կան ցնորքից:

Չկան լուսերես, ուկեմեր բայիկներս, իմ ծով նրախոյունն ու հարստությունը, հետաքրքր չէ տանել այս ծառ բերը, բայց տանում եմ հանուն փոքրիկ նարի- նեի, տանում եմ ու տատաբում:

ԱՐԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ



ՄԱՐԻՆԵ ԶԱՐԶԱՆԴԻ ԱՎԵՏԻՑՅԱՆԸ ծնվել է 1969 թ., մայիսի 2-ին: Դպրոցը դեռ չէր ավարտել, երբ մահացավ հայրը և 4 որրացած երեխաները ընկան մոր ուսերին: Ով կհավատար, որ այդքան դժժան հոգաների ու դժբախտ կյանքի վերջակետը կդառնար 18-ամյա Մարինեն: Երբ արդեն չափահաս դարձավ, որոշեց աշխատել Չկալովի անվան կարի արտադրական միավորումում: Ընդամենը մի քանի ամիս աշխատեց և այդ անիծված օրը՝ դեկտեմբերի 7-ին շատեղի իմանալով գոհ դարձավ: Մարինեն գտա նույն օրը՝ 3 ժամ հետո, ողջ էր: Անմիջապես տեղափոխեցինք Երևանի 6-րդ հիվանդանոց, 3 օր կռիվ տը վեց մահվան դեմ, սակայն չդիմացավ...



ՊԱՏՄՈՒՄ Է ՄԱՅՐԸ

Դաժան երկրաշարժը մտավ մեր երջանիկ ու խաղաղ ընտանիքը, նույնպես պոկելով իմ դեռ կոկոմ ու չբացված գեղեցիկ վարդերիս...

Ողջ մնացած մարդիկ, ուրեք գիտե՛ք իմ քաղերին, թող մեկ անգամ էլ հիշեն:

ԳԱՅԱՆԵ ՌՈՒՔԵՐՏԻ ԱՎԵՏԻՑՅԱՆԸ ծնվել է 1978 թ., հունվարի 18-ին:

ԹԱՄԱՐԱ ՌՈՒՔԵՐՏԻ ԱՎԵՏԻՑՅԱՆԸ ծնվել է 1979 թ., փետրվարի 15-ին:

Ունեի 2 աղջիկ և մի տղա. աշխարհում ամենաերջանիկ քաղցր քաղեր:



մայրն էի կարծում ինձ: Աղջիկներս խորհուրդ էի տալիս. դուք երկու քույր եք, երկու ընկերուհի, ես ձեզ: համար կդառնամ ընկերուհի, կարծես սիրտս գուշակում էր, որ երեխաներս պետք է ընկերուհու պատճառով տուժեին:

Իմ քարի ու անտեղ քաղեր, 3-րդ տարին եկավ, դուք չկաք, բալեք ջան, 4-րդ դարուն էլ կգա, դուք էլ չկաք: Ինչով կարող եմ Ձեր վիրավոր արտերը շահել: Գիտեմ, ոչ մի բանով, միայն ծաղիկներով է, որ միշտ բերում եմ Ձեզ համար: Իմ անտեղ ու քաղցր քաղեր:



ՌՈՒԶԱՆԱ ՎԱՐԴԳԵՍԻ ԱՎԱՄԱԶՅԱՆԸ (ՄԵԼԻՔՅԱՆ)

Ծնվել է Լենինականում, 1957 թ.: Սովորել է Գ. Սուրբդրակյան անվան № 20 միջն. դպրոցում: Ուսման տարիներին ցուցաբերել է բարձր առաջադիմություն: Գերազանց գեղաստանականներով ավարտել է դպրոցը և ընդունվել Երզնի քաղաքային մասնագիտողի տեխնոլոգիական բաժնից, ավարտել կարմիր դիպլոմով:

Ամուսնացած էր, ուներ 2 երեխա, որոնք երկրաշարժից մեկ տարի անց մեկնեցին ԱՄՆ մշտական բնակության: Ռուզանն աշխատում էր գույպեղենի արտադրական միավորումում, որպես ինժեներ-տեխնոլոգ: Համեստ էր, քարի, լավ մայր և կին իր ընտանիքի համար: Նա կնքեց իր մահկանացուն աշխատավայրում:



... ԵՄԱՅՈՒՎ ՎԱՐՈՍՆ ԱՉՔԵՐՈՒՄ (1961—1988)

Չկա այլևս ՆԻՍԱՆ, հրաշք այդ աղջիկը: Լուսանկարը, որ դրված էր գրասեղանին, անմիջապես ճանաչեց ընկերուհիդ:

— Վա՛յ, մեր Նիսան է, ինչ ձայն ունե՛ր, ինչպես էր երգում... Իսկ մայրդ՝ Սեդյան արտասովոր է, պատմում քո դաղը կենսագրությունը ակթից մինչև վերջ: Այն ժամանակ Գագիկը, Օվաննան ու դու շատ փոքր էիք, երեք որրուկներ: Նա իր թևի տակ առավ, հորդ հետ ինտանց հարազատի նման ու մայր ասեցիք նրան՝ արտով, գիտակցաբար:

Նիսան սովորեց Գոգոլի անվան դպրոցում, հետո աշխատանքի անցավ արդուկի գործարանում, բանվորուհի էր, առաջավոր: Ամուսնացավ, ուներ մի աղջիկ, Ռուզաննան հիմա 4-րդ դասարանում է, մեծանում է առանց քեզ: Դրժվար է...



ՉԻՆԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՎԱԾԻՆԳՏՈՒՆԻ

Ծնվել է 1952 թ. Լենինականում, բանվորի ընտանիքում: Ավարտել է Գոգոլի անվան միջնակարգ դպրոցը և անմիջապես աշխատանք է անցել Լուկաշինի անվան մանվածքային ֆաբրիկայում, որպես մանող բանվորուհի: Նա երջանիկ էր իր ընտանիքով, ուներ երկու երեխա: ՍՈՒՍԱՆՆԱՅԻ ուրախությամբ



չափ չկար, երբ ստացավ տոր բնակարան: Ավաղ, նրա ուրախությունը կարճ տևեց՝ ընդամենը երկու ամիս: Երկրաշարժի օրը գտնվում էր տանը և յոթերորդ օրը միայն գտան նրան ամուսնու և երեխայի հետ:

ՉԻՆԱՐՅԱՆ ԿՈԼՅԱ ՄԱՅԱԿԻ, ծնվել է 1946 թ. Ծիրակ գյուղում: Մանկությունից դառը օրեր է տեսել՝ շատ վաղ գրկվելով հորից: Նրա միակ



ուրախությունը երեխաներն էին: Երկրաշարժի օրը գոհվեց իր տոր բնակարանում կնոջ և երեխայի հետ:

ՉԻՆԱՐՅԱՆ ԳԵՎՈՐԻԿ ԿՈԼՅԱՅԻ, ծնվել է 1980 թ.: Սովորում էր № 30 դպրոցի երկրորդ դասարանում: Մտղուները լավ ապագա էին կանխատեսում իրենց որդու համար, բայց ավաղ ուր տարեկան տղան գոհվեց տանը ծնողների հետ միասին:



ԺՈՐԱ ԳԱՎԹԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Ծնվել է 1941 թ. Սոյեմբերի 7-ին, Լենինականում: Աշխատում էր կոմպրետորների գործարանում: Նա քարի ու հողատար հայր էր իր երեք երեխաների համար: Ժորան շատ երազանքներ ուներ իրականացնելու, բայց ընտանիքի լավ ամուսնու ու հարգված մարդուն քախտ չլիքակվեց ապրել ու տեսնել իր և հարս գաստերի քարությունը: Այդ օրը նա գտնվում էր քոչ տանը, մասնակցում էր նրա սկեսրոջ հուղարկավորությանը և այդտեղ էլ շատերի հետ միասին գոհ գնաց չար աղետին:



ԳՅՈՒՂՈՒՄՅԱՆ ՄԱՐԴԱՄ

Ծնվել է 1960 թ. հուլիսի 5-ին: Ընդամենը 28-ն էր բուրդի, երբ գոհ գնաց ավերիկ երկրաշարժի՝ որը թողնելով իր մեկ տարեկան դստերը: Նա աշխատում էր «Լենկոչու» որպես բանվորուհի: Կյանքից հետագավ երիտասարդ կինը, խոր կակիժ թողնելով հարազատների սրտում, արիստանք ու ցավ պատճառելով իր քարեկամներին ու օգուտներին:



...ԵՐԵՆԱՆԵՐՍ ՈՐՐ ՉՄՆԱՆ

ՍԵՂԱ ԲԱԳՐԱՏԻ ԲԱԴԵՎՈՅԱՆԸ ծնվել է 1925 թ. վականին: Առավոտ էր, աղետի նույն ժամին եկավ հարեանուհին ու միասին գնացին խանութ: Այլևս չէր վերադարձավ Սեղան: Նրբան ոչ մի տեղ չգտանք:

ԳԵՆՅԱ ՉԱԿՈՐԻ ԲԱԴԵՎՈՅԱՆԸ Սեղայի որդին, ծնվել է 1951 թ. սեպտեմբերին:

Երբին Ապրիլ էին Կոչույան փողոցի 9-րդ շենքի, 23 բնակարանում: Աշխատանքից նոր ետև վերադարձել էին, երբ սկսվեց երկրաշարժը, նկատել էին, որ նա կյանքում միշտ վախենում էր երկրաշարժից ու մինչև հիմա ինձ համար անբացառելի է մենցիկ, թե ինչ

չու էր պատից կախված օրացույցի վրա սեղով գծված դեկտեմբերի 7-ը: Ետև էի նկատել, բայց վախենում էի հարցնել: Իրար ձեռք բռնած դուրս եկանք տանից: Այդ պահին էլ կատարվեց անսպասելին. մենք տեսանք, թե ինչպես էին վազում դեմացի հարեանները՝ ԱՍՅԱՆ ու ՈՐՔԵՐՏԸ (ամուսնուհին): Ասյան ընկավ, ես նույնպես և ամեն ինչ փվեց:

Լուսեցում էր, մութ... Հեռու հեռվից լսվում էր Գենյայի ձայնը՝ «Մվեն, փրկվիր, երեխաներս որը լմանա»: Զգիտե՛մ ինչքան էր անցել, երբ նշմարեցի սղոտ մի լույս: Զեռքիցս բաց չեի թողնում Գենյային: Նա այլևս չխոսեց, ես դուրս եկա փլուզվածների տակից, որ կատարելի սիրելի ամուսնուս խնդրանք...

